ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 27 դեկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Խաչատուր Բարսեղյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Խաչատուր Բարսեղյանը 2012թ. դեկտեմբերի 10-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, խնդրելով՝ ... ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 32-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Դիմողի կարծիքով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով խոչընդոտում է փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց իրավունքների պաշտպանությունը, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Ինչպես նշում է դիմումի հեղինակը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման, որը գործարքի հասարակ գրավոր ձեւը պահպանված չլինելու դեպքում կողմերին չի զրկում գրավոր եւ այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի

իրավակարգավորման տրամաբանությամբ՝ աշխատանքային պայմանագրի բացակայության դեպքում անհնար է դառնում աշխատանքային հարաբերությունների առկայության՝ այլ ապացույցներով հաստատումը:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1038 որոշումը, որով վիճարկվող դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Նշյալ որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը, ի թիվս այլնի, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստումը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այս թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար: Հետեւաբար, այս առումով առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Խաչատուր Բարսեղյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 դեկտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-31